

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ XXIV ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈԱՒՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ԸՆԿԵՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

1941 թվի ՆՈՑԵՄԲԵՐԻ 6-ԻՆ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅԻ ՍՈՎԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ
ՆՈՒՍՏՈՒՄ, ԳՈՒՄԱՐՎԱԾ ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՏԻԱԿԱՆ ԵՎ ՀԱԱՐԱՍԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԸՆԿԵՐՆԵՐ:

Քսանչորս տարի է անցել այն օրից, երբ մեզ մոտ հաղթեց Հոկտեմ-
բերյան Սոցիալիստական ռեվոլյուցիան և մեր երկրում հաստատվեց սովետա-
կան հասարակարգը:

Մենք այժմ կանգնած ենք սովետական հասարակակարգի դոյուբյան
հաջորդ՝ 25-րդ տարվա շեմքին:

Սովորաբար Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի տարեդարձին նվիրված
հանդիսավոր նիստերում հանրագումարի են բերվում անցած տարվա ընթաց-
քում խաղաղ շինարարության բնագավառում ձեռք բերված մեր հաջողու-
թյունները: Մենք իրոք հնարավորություն ունենք այդպիսի ամփոփում
կատարելու, որովհետև մեր հաջողությունները խաղաղ շինարարության բնա-
գավառում աճում են ոչ միայն տարեցտարի, այլև ամսե-ամիս: Թե որտեղ
ինչ հաջողություններ են և որքան մեծ են դրանք, այդ հայտնի է բոլորին՝
ինչպես մեր բարեկամներին, այնպես էլ թշնամիներին:

Բայց անցած տարին միայն խաղաղ շինարարության տարի չէ, դրա
հետ միասին անցած տարին նաև պատերազմի տարի է գերմանական դավ-
թիչների դեմ, որոնք ուխտադրժորեն հարձակվեցին մեր խաղաղասեր երկ-
րի վրա: Անցած տարվա միայն առաջին վեց ամսում մեզ հաջողվեց շա-
րունակել մեր խաղաղ շինարարական աշխատանքը: Տարվա երկրորդ կեսը,
չորս ամսից ավելի, անցնում է գերմանական իմպերիալիստների դեմ մղ-
վող կատաղի պատերազմի պայմաններում: Այսպիսով, պատերազմը շրջա-
դարձային կետ դարձավ անցած տարում մեր երկրի զարգացման գործում:
Պատերազմն զգալիորեն կրճատեց, իսկ որոշ մարզերում բոլորովին դադա-
րեցրեց մեր խաղաղ շինարարական աշխատանքը: Նա ստիպեց մեր ամբողջ
աշխատանքը վերակառուցել ռազմական ձևով: Նա մեր երկիրը դարձրել է
միասնական ու համապարփակ մի թիկունք, որն սպասարկում է ռազմա-
ճակատին, սպասարկում է մեր կարմիր Բանակին, մեր Ռազմա-Մովային
Նախատրմին:

Խաղաղ շինարարության ժամանակաշրջանը վերջացավ: Սկսվել է գեր-

մանական զավթիչների դեմ մղվող ազատագրական պատերազմի ժամանակաշրջանը:

Ուստի միանգամայն տեղին է խոսել անցած տարվա երկրորդ կեսի, ապրիլի ճիշտ՝ տարվա երկրորդ կեսի ավելի քան չորս ամսվա պատերազմի հանրագումարների և այն խնդիրների մասին, որ մենք դնում ենք մեր առջև այս ազատագրական պատերազմում:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՅԷ ԶՈՐՍ ԱՄՍՈՒՄ

Պատերազմի սկզբում իմ ելույթներից մեկի մեջ ես արդեն ասել եմ, որ պատերազմը վտանգավոր սպառնալիք է ստեղծել մեր երկրի համար, որ մեր երկրի վրա լուրջ վտանգ է կախվել, որ հարկավոր է հասկանալ, ըմբռնել այդ վտանգը և մեր ամբողջ աշխատանքը վերակառուցել ռազմական ձեռքի Այժմ, պատերազմի չորս ամսվա հանրագումարներից ելնելով, ես պետք է ընդգծեմ, որ այդ վտանգը ոչ միայն չի թուլացել, այլ, ընդհակառակը, է՛լ ավելի է ուժեղացել: Թշնամին զավթել է Ուկրաինայի մեծ մասը, Բելոռուսիան, Մոլդովիան, Լիտվան, Լատվիան, Էստոնիան, մի շարք այլ մարզեր, Թափանցել է Դոնբաս, սև ամպի նման կախվել է Լենինգրադի վրա, սպառնում է մեր պանծալի մայրաքաղաքին՝ Մոսկվային: Գերմանաֆաշիստական զավթիչները կողոպտում են մեր երկիրը, ավերում են բանվորներին, գյուղացիներին և ինտելիգենցիայի աշխատանքով ստեղծված քաղաքներն ու գյուղերը: Հիտլերյան հորդաններն սպանում և բռնաթյուր են դարձնում մեր երկրի խաղաղ բնակիչներին վրա, չխնայելով կանանց, երեխաներին, ծերունիներին: Մեր երկրի այն մարզերում, որոնք զավթված են գերմանացիների կողմից, մեր եղբայրները տնքում են գերմանական կեղեքիչների լծի տակ:

Թշնամու արյան գետեր են հոսեցրել մեր բանակի և նավատորմի մարտիկները: պաշտպանելով հայրենիքի դատիֆն ու ազատությունը, արիարար հետ մղելով գազազած թշնամու գրոհները, ցույց տալով խիզախության ու հերոսության օրինակներ: Բայց թշնամին կանգ չի տռնում զոհերի առաջ, նա մաղաչալի անդամ չի դնահատում իր զինվորների արյունը, նա ռազմաճակատ է նետում նորանոր ջոկատներ՝ շարքից ելածներին փոխարինելու համար և լարում է բոլոր ուժերը, որպեսզի զրավի Լենինգրադն ու Մոսկվան նախքան ձմռան վրա հասնելը, որովհետև նա գիտե, որ ձմեռը ոչ մի լավ բան չի խոստանում իրեն:

Պատերազմի չորս ամսվա ընթացքում մենք կորցրել ենք սպանված 359 հազար և անհետ կորած՝ 378 հազար մարդ, իսկ վիրավորներն ունենք 1.020 հազար մարդ: Նույն այդ ժամանակամիջոցում թշնամին կորցրել է ավելի քան չորս և կես միլիոն մարդ՝ սպանված, վիրավոր և գերի:

Կասկած լինել չի կարող, որ պատերազմի չորս ամսվա հետևանքով Գերմանիան, որի մարդկային ռեզերվներն արդեն սպառվում են, — զգալիորեն ավելի է թուլացել, քան թե Սովետական Միությունը, որի ռեզերվները միայն աճում են ծավալվում լրիվ հալիով:

„ԿԱՅՆԱԿՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ“ ԶԱԽՈՂՈՒՄԸ

Հարձակման ձեռնարկելով մեր երկրի վրա, գերմանա-ֆաշիստական զավթիչները գտնում էին, որ իրենք անշուշտ կկարողանան Սովետական Միության հետ հաշիվը «վերջացնել» մեկ ու կես—երկու ամսում և կկարողանան այդ կարճ ժամանակամիջոցում հասնել մինչև Ուրալ: Պետք է ասել, որ գերմանացիները չէին թաքցնում «կայծակնային» հաղթության այդ պլանը: Ընդհակառակը, նրանք ամեն կերպ ազդարարում էին այդ: Սակայն փաստերը ցույց տվին «կայծակնային» պլանի ամբողջ թեթևամտությունն ու անհիմն լինելը: Այժմ այդ խելացնոր պլանը պետք է համարել վերջնականապես ձախողված: (Ծափահարություներ):

Ինչով բացատրել, որ «կայծակնային պատերազմը», որը հաջողվել էր Արևմտյան Եվրոպայում, չհաջողվեց և ձախողվեց Արևելքում:

Ինչի՞ վրա էին հույս դնում գերմանա-ֆաշիստական ստրատեգները, պնդելով, թե իրենք երկու ամսում հաշիվը կվերջացնեն Սովետական Միության հետ և այդ կարճ ժամանակամիջոցում կհասնեն մինչև Ուրալ:

Նրանք նկատի ունեին ամենից առաջ այն, որ լրջորեն հույս ունեին ստեղծել ընդհանուր կռաւիցիա ընդդեմ ՍՍՌՄ-ի, Մեծ Բրիտանիային և ԱՄՆ-ին ներգրավել այդ կռաւիցիայի մեջ, այդ երկրների կառավարող շրջաններին նախապես վախեցնելով ռուսացիայի ուղղակի անվտանգությամբ, և, այդպիսով, մեր երկրը լիովին մեկուսացնել մյուս պետություններից: Գերմանացիները գիտեին, որ առանձին պետությունների դասակարգերի միջև և այդ պետությունների ու Սովետական Երկրի միջև եղած հակասությունների օգտագործման իրենց քաղաքական խաղը արդեն տվել էր իր արդյունքները Փրանսիայում, որի կառավարողները թույլ ապուլ իրենց վախեցնել ռուսացիայի ուղղակի անվտանգության, սարսափից Հիտլերի ոտքերի տակ դրին իրենց հայրենիքը, հրաժարվելով դիմադրությունից: Գերմանա-ֆաշիստական ստրատեգները կարծում էին, թե նույնը կկատարվի Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի հետ: Ոչ-անհայտ Հեսսը հենց դրա համար էլ գերմանական ֆաշիստների կողմից ուղարկվեց Անգլիա, որպեսզի համոզե անգլիական քաղաքացիներին, որ նրանք միանային ՍՍՌՄ-ի դեմ ծրագրվող ընդհանուր արշավանքին: Բայց գերմանացիները չարաչար սխալվեցին: (Ծափահարություներ): Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ-ը, չնայած Հեսսի ջանքերին, ոչ միայն չմիացան ՍՍՌՄ-ի դեմ գերմանա-ֆաշիստական զավթիչների արշավանքին, այլ, ընդհակառակը, գտնվեցին ՍՍՌՄ-ի հետ միևնույն լագերում՝ ընդդեմ հիտլերյան Գերմանիայի: ՍՍՌՄ-ը ոչ միայն չմեկուսացվեց, այլ, ընդհակառակը, ձեռք բերեց նոր դաշնակիցներ հանձինս Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և գերմանացիների կողմից օկուպացիայի ենթարկված այլ երկրների: Բանից դուրս եկավ, որ հակասությունների օգտագործման և ռուսացիայի ուղղակի անվտանգության վախեցնելու գերմանական քաղաքական խաղը կորցրել է իր ուժը և այլևս պիտանի չէ նոր պայմանների համար: Եվ ոչ միայն պիտանի չէ, այլ նաև հղի է գերմանական զավթիչների համար մեծ վտանգներով, որովհետև դա պատերազմի նոր պայմաններում հասցնում է ուղղակի հակադիր արդյունքների:

Երկրորդ, գերմանացիներն այն հույսն ունեին, թե սովետական կարգերն անկայուն են, սովետական թիկունքը խախտում է, ենթադրելով, թե

է գործել թշնամական միջավայրում, ստիպված է օտար երկրում: ստեղծել նոր թիկունք, որը միևնույն ժամանակ քայքայում են մեր պարտիզանները, մի բան, որ հիմքից կազմալուծում է գերմանական բանակի մատակարարումը, նրան ստիպում է վախենալ իր թիկունքից և նրա մեջ մեռցնում է հավատը զենքի իր գործիքան կայունությունը, մինչդեռ մեր բանակը գործում է իր հարազատ միջավայրում, վայելում է իր թիկունքի անընդհատ աջակցությունը, ունի ապահովված մատակարարում մարդկանցով, ռազմամթերքով, պարենամթերքով և հաստատ հավատում է իր թիկունքին: Ահա թե ինչու մեր բանակն ավելի ուժեղ դուրս եկավ, քան ենթադրում էին գերմանացիները, իսկ գերմանական բանակն ավելի թույլ, քան թե կարելի էր ենթադրել, դատելով գերմանական զավթիչների պարծենկոտ ռեկլամներին: Լենինգրադի և Սոսկովայի պաշտպանությունը, որտեղ մեր զինվորիկները ղեկավարում էին զինվորական զորքերի մի երեք տասնյակ կազրային զինվորիկներ, ցույց է տալիս, որ հայրենական պատերազմի բոցերի մեջ կոփվում և արդեն կոփվել են սովետական նոր մարտիկներ ու հրամանատարներ, օդաչուներ, հրետանավորներ, ականանետներ, տանկիստներ, հետեակայիններ, նավաստիներ, որոնք վաղը ահ ու սարսափ կդառնան գերմանական բանակի համար: (Բուռն ծափահարություններ):

Կասկած չկա, որ այս բոլոր հանգամանքները, միասին վերցրած, կանխորոշեցին «կայծակնային պատերազմի» ձախողման անխուսափելիությունն Արևելքում:

ՄԵՐ ԲԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Այս ամենը, իհարկե, ճիշտ է: Բայց ճիշտ է նաև այն, որ այս նպատակովոր պայմանների հետ միասին կան Կարմիր Բանակի համար նաև անբարենպաստ մի շարք պայմաններ, որոնց հետևանքով մեր բանակը ժամանակավոր անհաջողություններ է կրում, ստիպված է նահանջել, ստիպված է թշնամուն հանձնել մեր երկրի մի շարք մարզերը:

Ի՞նչ անբարենպաստ պայմաններ են դրանք:

Որոնք են Կարմիր Բանակի ժամանակավոր ռազմական անհաջողությունների պատճառները:

Կարմիր Բանակի անհաջողությունների պատճառներից մեկը գերմանաֆաշիստական զորքերի դեմ երկրորդ ճակատի բացակայությունն է Եվրոպայում: Բանն այն է, որ ներկայումս եվրոպական կոնտինենտում գոյություն չունեն Մեծ Բրիտանիայի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների որևէ բանակներ, որոնք պատերազմ մղեին գերմանաֆաշիստական զորքերի դեմ, որի հետևանքով գերմանացիները հարկադրված չեն լինում մանրատել իրենց ուժերը և պատերազմ մղել երկու ճակատում՝ Արևմուտքում և Արևելքում: Եվ այս հանգամանքը հասցնում է այն բանին, որ գերմանացիներն Արևմուտքում իրենց թիկունքը համարելով ապահովված, հնարավորություն ունեն իրենց բոլոր զորքերը և Եվրոպայի իրենց զաշնակիցների զորքերն ուղղել մեր երկրի դեմ: Իրադրությունն այժմ այնպիսին է, որ մեր երկիրը միայնակ, առանց որևէ մեկի ռազմական օգնության, ազատագրական պատերազմ է մղում գերմանացիների, ֆինների, ռումինացիների, իտալացիների,

հունգարացիների միացյալ ուժերի դեմ: Գերմանացիները գոռոզանում են իրենց ժամանակավոր հաջողություններով և առանց չափ ու սահմանի գովաբանում են իրենց բանակը, հավատացնելով, թե նա միշտ էլ կարող է մարտերում մեն-մենակ հաղթել Կարմիր Բանակին: Բայց գերմանացիների հավաստիացումները դատարկ պարծենկոտություն են, որովհետև անհասկանալի է, թե այդ զեպքում ինչու հապա գերմանացիները դիմեցին Ֆինների, ռումինացիների, իտալացիների, հունգարացիների օգնությանը՝ ընդդեմ Կարմիր Բանակի, որը կռվում է բացառապես իր ուժերով, առանց կողմնակի ռազմական օգնության: Կասկած չկա, որ երկրորդ ճակատի բացակայությունը նվրոպայում՝ ընդդեմ գերմանացիների զգալիորեն հեշտացնում է գերմանական բանակի դրությունը: Բայց կասկած չենել չի կարող նաև, որ երկրորդ ճակատի ստեղծվելը նվրոպայի կոնախենություն, — իսկ դա անկասկած պետք է ստեղծվի ամենամոտիկ ժամանակներս (բուն ծափահարություններ), — էսպես կթեթևացնի մեր բանակի դրությունը՝ ի փաստ դեմանական բանակի:

Մեր բանակի ժամանակավոր անհաջողությունների մյուս պատճառը տանկերի և մասամբ ավիացիայի պակասն է մեղանում: Ժամանակակից պատերազմում հետևակի համար շատ դժվար է կռվել առանց տանկերի և առանց օդից բավարար ավիացիոն պաշտպանություն ունենալու: Մեր ավիացիան որակով գերազանցում է գերմանական ավիացիայից, իսկ մեր պանծալի օդաչուներն իրենց պակեկ են անվեհեր մարտիկների փառքով: (Ծափահարություններ): Բայց ինքնաթիռներ մենք առայժմ ավելի քիչ ունենք, քան գերմանացիները: Մեր տանկերն իրենց որակով գերազանցում են գերմանական տանկերից, իսկ մեր պանծալի տանկիստներն ու հրետանավորները շատ անգամ են փախուստի մատնել գերմանական գովաբանված զորքերին՝ նրանց բազմաթիվ տանկերով: (Ծափահարություններ): Բայց տանկեր մենք, այնուամենայնիվ, մի քանի անգամ ավելի քիչ ունենք, քան գերմանացիները: Այդ է գերմանական բանակի ժամանակավոր հաջողությունների գագաթները: Չի կարելի ասել, թե մեր տանկային արդյունաբերությունը վատ է աշխատում և մեր ռազմաճակատին քիչ տանկեր է տալիս: Ոչ, նա շատ լավ է աշխատում և արտադրում է ոչ-քիչ թվով հիանալի տանկեր: Բայց գերմանացիներն արտադրում են անհամեմատ ավելի շատ տանկեր, որովհետև նրանք այժմ իրենց տրամադրություն տակ ունեն ոչ միայն իրենց տանկային արդյունաբերությունը, այլև Չեխոսլովակիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի արդյունաբերությունը: Առանց այդ հանգամանքի Կարմիր Բանակը վաղուց ջախջախած կլիներ գերմանական բանակին, որը կռվի մեջ չէր մտնի առանց տանկերի և չէր դիմանա մեր զորամասերի հարվածին, եթե տանկերի տեսակետից գերակշռություն չունենար: (Ծափահարություններ):

Գոյություն ունի միայն մեկ միջոց, որն անհրաժեշտ է, որպեսզի գերոյի հավասարեցնենք գերմանացիների գերակշռությունը տանկերի ասպարեզում և դրանով իսկ արմատապես քարելավենք մեր բանակի դրությունը: Նա, այդ միջոցը ոչ միայն այն է, որ մի քանի անգամ ավելացնենք տանկերի արտադրությունը մեր երկրում, այլ նաև այն, որ խիստ կերպով ավելացնենք հակատանկային ինքնաթիռների, հակատանկային հրացանների ու հրանոթների, հակատանկային նռնակների ու ականանետիչների արտադրու-

թշուհը, կառուցենք ավելի մեծ թվով հակատանկային փոսեր և հակատանկային ամեն տեսակ այլ խոչընդոտներ:

Այս է այժմ խնդիրը:

Մենք կարող ենք կատարել այս խնդիրը և մենք պետք է այդ կատարենք, ինչպես էլ լինի:

ՈՎԲԵՐ ԵՆ «ՆԱԳԻՐՈՆԱԼ-ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ»

Գերմանական զավթիչներին, այսինքն՝ հիտլերականներին մեզ մոտ սովորաբար անվանում են ֆաշիստներ: Հիտլերականները, բանից դուրս է գալիս, այդ ճիշտ չեն համարում և համառուն շարունակում են իրենց անվանել «նացիոնալ-սոցիալիստներ»: Հետևապես, գերմանացիներն ուզում են հավատացնել մեզ, թե հիտլերականների պարտիան, գերմանական զավթիչների պարտիան, որը կոդոպտում է Եվրոպան և որը չարանենգ հարձակում կազմակերպեց մեր սոցիալիստական պետութայն դեմ, սոցիալիստական պարտիա է: Այդ հնարավոր է արդյոք: Ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել սոցիալիզմի և հիտլերյան գաղաղած զավթիչների միջև, որոնք կոդոպտում և ճնշում են Եվրոպայի ժողովուրդներին:

Կարելի է արդյոք հիտլերականներին համարել նացիոնալիստներ: Ո՛չ, չի կարելի: Իրականում հիտլերականներն այժմ ոչ թե նացիոնալիստներ են, այլ իմպերիալիստներ: Բանի դեռ հիտլերականներն զրադվում էին գերմանական հողերն ի մի հավաքելով ու Հոենստյան մարզը, Ավստրիան և այլն միակցելով, նրանց կարելի էր որոշ հիմքով համարել նացիոնալիստներ: Բայց այն բանից հետո, երբ նրանք զավթեցին ուրիշ տերիտորիաներ և ստրկացրին եվրոպական ազգերին՝ չեխերին, սլովակներին, լեհերին, նորվեգացիներին, դանիացիներին, հոլանդացիներին, բելգիացիներին, ֆրանսիացիներին, սերբերին, հույներին, ուկրաինացիներին, բելոռուսներին, մերձբալթյան ժողովուրդներին և այլն ու սկսեցին ձգտել համաշխարհային տիրապետութայն, հիտլերյան պարտիան դադարեց նացիոնալիստական լինելուց, որովհետև նա այդ պահից դարձավ իմպերիալիստական, զավթողական, կեղեքիչ պարտիա:

Հիտլերականների պարտիան իմպերիալիստների պարտիա է, և այն էլ՝ աշխարհի բոլոր իմպերիալիստներից ամենագիշատիչ ու ամենաավագակային իմպերիալիստների:

Կարելի է արդյոք հիտլերականներին համարել սոցիալիստներ: Ո՛չ, չի կարելի: Իրականում հիտլերականները սոցիալիզմի ոխերիմ թշնամիներն են, ամենակատաղի ռեակցիոներներն ու սենարյուրյակայիններ, որոնք Եվրոպայի բանվոր դասակարգին ու ժողովուրդներին զրկել են տարրական դեմոկրատական ազատություններից: Իրենց ռեակցիոն սենարյուրյակային էությունը քողարկելու համար հիտլերականներն անպլոտայն լինելու ներքին ուժերն անարգում են իբրև պրոլետարատական ռեժիմ: Բայց Անգլիայում և ԱՄՆ-ում կան տարրական դեմոկրատական ազատություններ, զոյություն ունեն բանվորները ու ծառայողները պրոֆմիություններ, գոյություն ունեն բանվորական պարտիաներ, գոյություն ունի պառլամենտ, իսկ Գերմանիայում՝ հիտլերյան ռեժիմի օրով ոչնչացվել են այդ բոլոր ինստիտուտները: Բավական է միայն համեմատության մեջ դնել այս երկու կարգի փաստերը, որպեսզի հասկանալի լինի հիտլերյան ռեժիմի ռեակցիոն էությունը և անդրո-

ամերիկյան պրոտոկրատական ռեժիմի մասին գերմանական ֆաշիստների շահակրատությունն ամբողջ կեղծությունը: Ըստ էության հիտլերյան ռեժիմը պատճենն է հանդիսանում այն ռեակցիոն ռեժիմի, որ գոյություն ուներ Ռուսաստանում ցարիզմի օրով: Հայտնի է, որ հիտլերականները նույնպիսի հաճույքով ոտնակոխ են անում բանվորների իրավունքները, ինտելիգենցիայի իրավունքները և ժողովուրդների իրավունքները, ինչպես որ զրանք ոտնակոխ էր անում ցարական ռեժիմը, որ նրանք նույնպիսի հաճույքով կազմակերպում են միջնադարյան հրեական ջարդեր, ինչպես որ այդ կազմակերպում էր ցարական ռեժիմը:

Հիտլերյան պարտիան դեմոկրատական ազատությունների լքմամբների պարտիա է, միջնադարյան ռեակցիայի և սևաբայալայի ջարդերի պարտիա:

Եվ եթե այդ մոլի իմպերիալիստներն ու ամենակատաղի ռեակցիոններները դեռ շարունակում են «նացիոնալիստների» ու «սոցիալիստների» քղամիդ հագնել, ապա նրանք այդ անում են, որպեսզի խաբեն ժողովրդին, մոլորեցնեն միամիտներին և «նացիոնալիզմի» ու «սոցիալիզմի» դրոշակի տակ քողարկեն իրենց ավազակային իմպերիալիստական էությունը:

Մի րամարդի փետուրներով պճնված ազնավներ... բայց որքան էլ ազնավները սիրամարդի փետուրներով պճնվեն, նրանք չեն դադարում ազնավ լինելուց:

«Հարկավոր է ամեն տեսակի միջոցներով,—ասում է Հիտլերը,—հասնել այն բանին, որ աշխարհը նվաճվի գերմանացիների կողմից: Եթե մենք ուզում ենք ստեղծել գերմանական մեր մեծ կայսրությունը, մենք պետք է ամենից առաջ դուրս մզենք ու բնաջնջենք սլավոնական ժողովուրդներին՝ ռուսներին, լեհերին, չեխներին, սլովակներին, բուլղարներին, ուկրաինացիներին, բելոռուսներին: Այդ բանը չանելու համար չկա ոչ մի պատճառ»:

«Մարդը,—ասում է Հիտլերը,—մեղավոր է իր ծնված օրից. նրան կառավարել կարելի է միայն ուժի միջոցով: Նրա հետ ունեցած վերաբերմունքի մեջ թույլատրելի են ամեն տեսակի մեթոդներ: Երբ քաղաքականությունը պահանջում է, պետք է ստել, մատնել և նույնիսկ սպանել»:

«Սպանեցեք յուրաքանչյուրին,—ասում է Գյոթլինգը,—ով դեմ է մեզ. սպանեցեք, սպանեցեք. դրա համար դուք չեք պատասխանատվություն կրում, այլ ես. ուստի սպանեցեք»:

«Ես,—ասում է Հիտլերը,—մարդուն ազատագրում եմ այն ստորացնող ցնորքից, որը կոչվում է խիղճ: Խիղճը, ինչպես և կրթությունը, խեղանդամ է դարձնում մարդուն: Ես ունեմ այն առավելությունը, որ ինձ չեն կաշկանդում տեսական կամ բարոյական կարգի ոչ մի տեսակ նկատառումներ»:

Գերմանական հրամանատարությունից սեպտեմբերի 25-ին 489-րդ հետևակային գնդին տրված հրամաններից մեկում, որը գտնվել է գերմանական մի սպանված ենթասպայի մոտ, ասվում է.

«Ես հրամայում եմ կրակ բանալ յուրաքանչյուր ռուսի դեմ, հենց որ նա կերևա 600 մետրի վրա: Ռուսը պետք է գիտենա, որ նա իր հանդեսը ունի վճռական թշնամի, որից նա չի կարող սպասել որևէ ներողամտություն»:

Գերմանական հրամանատարության կողմից գինվորներին ուղղված մի դիմումի մեջ, որը գտնվել է Մայնի Ֆրանկֆուրտի բնակիչ՝ սպանված լեյտենանտ Դուսաավ Յիգելի մոտ, ասվում է.

«Գուռ չունենա սիրտ և նյարդեր. պատերազմի ժամանակ դրանք հարկավոր չեն: Ոչնչացրու քո մեջ խիղճն ու կարեկցությունը — սպանիր ամեն մի ոռուսի, ամեն մի սովետական մարդու. կանգ մի առնիր, եթե քո առջև կանգնած է ծերունի կամ կին, աղջիկ կամ տղա — սպանիր, դրանով դու քեզ կփրկես կործանումից, կապահովես քո ընտանիքի ապագան և հավիտյան կփառաբանվես»:

Ահա ձեզ հիտլերյան պարտիայի լիդերների և հիտլերյան հրամանատարության ծրագիրն ու ցուցումները, մարդկային կերպարանքը կորցրած և վայրի գազանների մակարդակին իջած մարդկանց ծրագիրն ու ցուցումները:

Եվ խզից ու պատվից զուրկ այդ մարդիկ, կենդանու ընտանիքային տեր այդ մարդիկ լկտիություն ունեն ոռուս մեծ ազգի՝ Պլեխանովի և Լենինի, Բելինսկու և Չերնիշևսկու, Պուշկինի և Տոլստոյի, Գլինկայի և Չայկովսկու, Գորկու և Չեխովի, Սեչենովի և Պավլովի, Ռևյուտի և Սուբի-կովի, Սուվորովի և Կուտուզովի ազգի բնաջնջման կոչ անելու...

Գերմանական զավթիչներն ուղղում են ունենալ բնաջնջող պատերազմ՝ ՍՍՌՄ-ի ժողովուրդների դեմ: Ի՛նչ կա որ, եթե գերմանացիներն ուղղում են ունենալ բնաջնջող պատերազմ, նրանք այդ կստանան: (Բուռն, երկարաակ ծափահարություններ):

Այսուհետև մեր խնդիրը, ՍՍՌՄ-ի ժողովուրդների խնդիրը, մեր բանակի և մեր նավատորմի մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների խնդիրը կլինի՝ մինչև վերջինը բնաջնջել այն բոլոր գերմանացիներին, որոնք ներխուժել են մեր հայրենիքի տերիտորիան՝ իբրև նրա օկուպանտներ: (Բուռն ծափահարություններ, «նիշտ է» բացակոծություններ, «ուռաններ»):

Ո՛չ մի գթություն գերմանական օկուպանտներին:

Մահ գերմանական օկուպանտներին: (Բուռն ծափահարություններ):

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՋԱԽՋԱԽՈՒՄՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Ե

Հենց միայն այն հանգամանքը, որ գերմանական զավթիչներն իրենց բարոյական դեգրադացիայի մեջ, կորցնելով մարդկային կերպարանքը, վաղուց արդեն իջել են վայրի գազանների մակարդակին, — հենց միայն այս հանգամանքն արդեն վկայում է, որ նրանք իրենց դատապարտել են անխուսափելի կործանման:

Բայց հիտլերյան զավթիչների և նրանց բանակների անխուսափելի կործանումը բնորոշվում է ոչ միայն բարոյական գործոններով:

Գոյություն ունեն ևս երեք հիմնական գործոններ, որոնց ուժերն աճում են օրեցօր և որոնք ոչ հեռավոր ապագայում պետք է հասցնեն հիտլերյան ավազակային իմպերիալիզմի անխուսափելի ջախջախմանը: (Ծափահարություններ):

Այդ, նախ՝ իմպերիալիստական Գերմանիայի եվրոպական թիկունքի անկախությունն է, «նոր կարգի» անկախությունը եվրոպայում: Գերմանական զավթիչներն ստրկացրել են եվրոպական կոնտինենտի ժողովուրդներին՝ Ֆրանսիայից սկսած մինչև Սովետական Մերձբալթիկան, Նորվեգիայից, Դանիայից, Բելգիայից, Հոլանդիայից և Սովետական Բելոռուսիայից:

սկսած մինչև Բալկաններն ու Սովետական Ուկրաինան, նրանց զրկել են տարրական դեմոկրատական ազատություններից, նրանց զրկել են իրենց բախտը տնօրինելու իրավունքից, նրանցից խլել են հացը, միսը, հումքը, նրանց դարձրել են իրենց ստրուկները, խաչել են լեհերին, չեխերին, սերբերին և վճռել, որ Եվրոպայում տիրապետության հասնելով, իրենք այժմ կարող են դրա հիման վրա կառուցել Գերմանիայի համաշխարհային տիրապետությունը: Այդ բանը նրանց մոտ կոչվում է «նոր կարգ Եվրոպայում»: Բայց այդ ի՞նչ «հիմք» է, այդ ի՞նչ «նոր կարգ» է:

Միայն հիտլերյան ինքնասիրահար տխմարները չեն տեսնում, որ «նոր կարգը» Եվրոպայում և այդ կարգի տխրահռչակ «հիմքը» մի հրաբուխ է ներկայացնում, որը պատրաստ է ամեն մի րոպե ժայթքելու և իր տափ թաղելու գերմանական իմպերիալիստական թղթե տնակը: Մատնանշում են Նապոլեոնին, հավատացնելով, թե Հիտլերը գործում է Նապոլեոնի նման և թե նա ամեն բանում նմանվում է Նապոլեոնին: Բայց, նախ՝ այդ դեպքում չպետք է մոռանալ Նապոլեոնի ճակատագրի մասին: Իսկ, երկրորդ՝ Հիտլերը Նապոլեոնին նման է ոչ ավելի, քան կատվի ձագը առյուծին (ծիծաղ, աղմկելիք ծափահարությամբ), որովհետև Նապոլեոնը կռվում էր ռեակցիայի ուժերի դեմ, հենվելով պրոգրեսիվ ուժերի վրա, իսկ Հիտլերը, ընդհակառակը, հենվում է ռեակցիոն ուժերի վրա, պայքար մղելով պրոգրեսիվ ուժերի դեմ: Միմիայն Բեռլինի հիտլերյան տխմարները չեն կարող հասկանալ, որ Եվրոպայի ստրկացված ժողովուրդները կայքաբարեն և կապստամբեն հիտլերյան բռնակալության դեմ: Ո՞վ կարող է կասկածել, որ ՍՍՌՄ-ը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը լիակատար աջակցություն ցույց կտան Եվրոպայի ժողովուրդներին՝ հիտլերյան բռնակալության դեմ մղվող նրանց ազատագրական պայքարում: (Մտփափառությամբ):

Այդ, երկրորդ՝ հիտլերյան զավթիչների գերմանական թիկունքի տնկայունությունն է: Քանի դեռ հիտլերականներն զբաղվում էին Վերսալյան պայմանագրի հետևանքով կտոր-կտոր արված Գերմանիայի մասերն ի մի հավաքելով, նրանք կարող էին գտնել գերմանական ժողովրդի աջակցությունը, ժողովուրդը, որը ոգեշնչված էր Գերմանիայի վերականգնման իդեալով: Բայց այն բանից հետո, երբ այդ խնդիրը լուծվեց, իսկ հիտլերականները կանգնեցին իմպերիալիզմի ուղու վրա, ուրիշի հոգերը զավթելու, օտար ժողովուրդներին նվաճելու ուղու վրա, Եվրոպայի ժողովուրդներին և ՍՍՌՄ-ի ժողովուրդներին դարձնելով ներկայիս Գերմանիայի ոխերիմ թշնամիները, — գերմանական ժողովրդի մեջ խորը բեկում կատարվեց պատերազմը շարունակելու դեմ, պատերազմը լիկվիդացիայի ենթարկելու համար: Երկու տարուց ավելի շարունակվող արյունահեղ պատերազմը, որի վերջը դեռ չի երևում, միլիոնավոր մարդկային զոհեր, սով, աղքատացում, համաճարակներ, ամենուրեք գերմանացիների դեմ թշնամական մթնոլորտ: Հիտլերի տխմար քաղաքականությունը, որը ՍՍՌՄ-ի ժողովուրդներին դարձրեց ներկայիս Գերմանիայի ոխերիմ թշնամին, — այս ամենը չէր կարող գերմանական ժողովրդին չըջել ընդդեմ ավելորդ ու ավերիչ պատերազմի: Միմիայն հիտլերյան տխմարները չեն կարող հասկանալ, որ գերմանական զորքերի ոչ միայն եվրոպական թիկունքը, այլև գերմանական թիկունքն էլ մի հրաբուխ է ներկայացնում, որը պատրաստ է ժայթքելու և իր տափ թաղելու հիտլերյան ավանտյուրիստներին:

Այդ, զերջուպես, ՍՍՌՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից իրենց ընդգրկած գերմանա-ֆաշիստական իմպերիալիստներին: Փաստ է, որ Մեծ Բրիտանիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Սովետական Միությունը միավորվել են, կազմելով միասնական մի լագեր, որն իր առջև նպատակ է դրել՝ ջախջախել հիտլերյան իմպերիալիստներին և նրանց զավթողական բանակները: Ժամանակակից պատերազմը մոտոոների պատերազմ է: Պատերազմը կշահի նա, ով մոտոոների արտադրության ասպարեզում կունենա ճնշող գերակշռություն: Եթե միացնենք ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և ՍՍՌՄ-ի մոտոոային արտադրությունը, ապա մենք մոտոոների ասպարեզում Գերմանիայի համեմատությամբ գերակշռություն կօժանանք առնվազն եռակի չափով: Գրանուժն է հիտլերյան ավազակային իմպերիալիզմի անխուսափելի կործանման հիմքերից մեկը:

Երեք տերությունների վերջերս Մոսկվայում տեղի ունեցած կոնֆերանսը՝ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ պ-րն Բիվերբրուկի և ԱՄՆ-ի ներկայացուցիչ պ-րն Հարրիմանի մասնակցությամբ, որոշեց մեր երկրին սիստեմատիկաբար օգնել տանկերով ու ավիացիայով: Ինչպես հայտնի է, մենք արդեն այդ որոշման հիման վրա սկսել ենք ստանալ տանկեր և ինքնաթիռներ: Գրանից ավելի առաջ Մեծ Բրիտանիան ապահովեց մեր երկրին այնպիսի զենքիցիտային նյութեր մատակարարելը, ինչպես՝ ալյումինը, կապարը, անագը, նիկելը, կառնյուկը: Եթե դրան ավելացնենք այն փաստը, որ օդերս Ամերիկայի Միացյալ Նահանգները որոշել են Սովետական Միությանը տրամադրել մեկ միլիարդ դոլլարի փոխառություն, ապա կարելի է համոզված կերպով ասել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և ՍՍՌՄ-ի կողմից իրենց ունեցած գործ է (քառն ծափահարությամբ), որն աճում է և կաճի ի բարձրություն մեր ընդհանուր ազատագրական գործի:

Սրանք են այն դրոժոնները, որոնք որոշում են գերմանա-ֆաշիստական իմպերիալիզմի անխուսափելի կործանումը:

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լենինը տարբերում էր երկու տիպի պատերազմ — զավթողական ու հեռակապես՝ անարդարացի պատերազմներ և ազատագրական, այսինքն՝ արդարացի պատերազմներ:

Գերմանացիներն այժմ մղում են զավթողական, անարդարացի պատերազմ, որի նպատակն է ուրիշի տերիտորիաների զավթումը և օտար ժողովուրդների նվաճումը: Ուստի բոլոր ազնիվ մարդիկ պետք է ոտքի ելնեն ընդդեմ գերմանական զավթիչների, իրեն թշնամիների:

Ի տարբերություն հիտլերյան Գերմանիայից, Սովետական Միությունը և նրա դաշնակիցները մղում են ազատագրական, արդարացի պատերազմ, որի նպատակն է Եվրոպայի և ԱՄՆ-ի ստրկացված ժողովուրդներին ազատագրել հիտլերյան բռնակալությունից: Ուստի, բոլոր ազնիվ մարդիկ պետք է պաշտպանեն ՍՍՌՄ-ի, Մեծ Բրիտանիայի և մյուս դաշնակիցների բանակներին իրեն ազատարար բանակներին:

Մենք չունենք և չենք կարող ունենալ պատերազմի այնպիսի նպատակներ, ինչպես ուրիշի տերիտորիաների գրավումը, օտար ժողովուրդների նվաճումը, — միևնույն է՝ խոսքը վերաբերում է Եվրոպայի ժողովուրդներին ու տերիտորիաներին, թե Ասիայի, այդ թվում նաև Իրանի, ժողովուրդներին:

րին ու տերիտորիաներին: Մեր առաջնահերթ նպատակն է՝ մեր տերիտորիաներն ու մեր ժողովուրդներին ազատագրել դերմանա-ֆաշիստական լծից:

Մենք չունենք և չենք կարող ունենալ պատերազմի այնպիսի նպատակներ, ինչպես մեր կամքի ու մեր ռեժիմի փաթաթումը նվերպայի սլավոնական և այլ ստրկացված ժողովուրդների վզին, որոնք օգնություն են սպասում մեզանից: Մեր նպատակն է՝ օգնել այդ ժողովուրդներին հիտլերյան բռնակալության դեմ մղվող նրանց ազատագրական պայքարում և ապա նրանց հնարավորություն տալ միանգամայն ազատորեն կարգավորվելու իրենց հողի վրա այնպես, ինչպես իրենք են ուզում: Ո՛չ մի միջամտություն այլ ժողովուրդների ներքին գործերին:

Բայց այդ նպատակներն իրականացնելու համար հարկավոր է ջախջախել գերմանական զավթիչների ռազմական ուժը, հարկավոր է մինչև վերջինը բնաջնջել բոլոր գերմանական օկուպանտներին (բուլոն, երկարատև ծափահարություններ), որոնք ներխուժել են մեր հայրենիքը՝ նրան ստրկացնելու համար:

Բայց դրա համար անհրաժեշտ է, որ մեր բանակը և մեր նավատորմը գործոն ու ակտիվ շակցություն ստանան մեր ամբողջ երկրի կողմից, որ մեր բանվորներն ու ծառայողները, տղամարդիկ և կանայք ձեռնարկություններում աշխատեն առանց ձեռքները ծալելու և ռազմաճակատին տան ավելի ու ավելի շատ տանկ, հակատանկային հրացան ու հրանոթ, ինքնաթիռ, թնդանոթ, ականանետիչ, զնդացի, հրացան, ռազմամթերք, որ մեր կոլխոզնիկները, տղամարդիկ ու կանայք, իրենց դաշտերում աշխատեն առանց ձեռքները ծալելու և ռազմաճակատին ու երկրին տան ավելի ու ավելի շատ հաց, միս, հումք՝ արդյունաբերության համար, որպեսզի մեր ամբողջ երկիրը և ՍՍՄԽ-ի բոլոր ժողովուրդները կազմակերպվեն, ստեղծելով միասնական մարտական մի լագեր, որը մեր բանակի ու նավատորմի հետ միասին աղա-տագրական մեծ պատերազմ մղի մեր հայրենիքի պատվի ու ազատության համար, գերմանական բանակների ջախջախման համար: (Բուլոն ծափահարություններ):

Այս է այժմ խնդիրը:

Մենք կարող ենք և մենք պետք է կատարենք այս խնդիրը:

Միայն կատարելով այս խնդիրը և ջախջախելով գերմանական զավթիչներին, մենք կարող ենք ձեռք բերել երկարատև ու արդար խաղաղություն:

Լիակատար կերպով ջախջախենք գերմանական զավթիչներին: (Բուլոն ծափահարություններ):

Ազատագրենք հիտլերյան բռնակալության լծի տակ տնքացող բոլոր ճնշված ժողովուրդներին: (Բուլոն ծափահարություններ):

Կեցցե՛ Սովետական Միության ժողովուրդների անխորտակելի բարեկամությունը: (Բուլոն ծափահարություններ):

Կեցցե՛ մեր Կարմիր Բանակը և մեր Կարմիր Նավատորմը: (Բուլոն ծափահարություններ):

Կեցցե՛ մեր փառապանծ Հայրենիքը: (Բուլոն ծափահարություններ):

Մեր գործն արդար է, հաղթանակը մերը կլինի:

(Բուլոն ծափահարություններ: Բոլորը ոտքի են կանգնում: Բացակացություններ՝ «Մեծ Ստալինին ունա՛»: «Կեցցե՛ ընկեր Ստալինը»: Բուլոն, երկար ժամանակ չդադարող օվացիա):

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

ԸՆԿԵՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՃԱՌԸ

ԱՐՏԱՍԱՆԱԾ ԿԱՐՄԻ ԲԱՆԱԿԻ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԻՆ 1941 ԹՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ԻՆ
ՄՈՅԿՎԱՅԻ ԿԱՐՄԻ ՇՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ընկեր կարմիր-բանակայիններ և կարմիր-նավատորմայիններ, հրամանատարներ և քաղաշխատողներ, բանվորներ և բանվորուհիներ, կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ, ինտելիգենտ աշխատանքի աշխատողներ, ժամանակավորապես գերմանական ավազակների լծի տակ ընկած եղբայրներ ու քույրեր մեր թշնամու թիկունքում, մեր փառապանդ պարտիզաններ ու պարտիզանուհիներ, որ քարուքանդ եք անում գերմանական զավթիչների թիկունքները:

Սովետական կառավարության և մեր բոլշևիկյան պարտիայի անունից ողջունում եմ ձեզ և շնորհավորում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեյուցիայի XXIV տարեդարձը:

Ընկերներ: Ծանր պայմաններում է վիճակվում մեզ այսօր տոնելու Հոկտեմբերյան ռեյուցիայի XXIV տարեդարձը: Գերմանական ավազակների ուխտադրուժ հարձակումը և մեր վզին վաթաթված պատերազմը սպառնալիք են ստեղծել մեր երկրի համար: Մենք ժամանակավորապես կորցրել ենք մի շարք մարզեր, թշնամին կանգնած է Լենինգրադի և Մոսկվայի դռների առաջ, թշնամին հույս ունի, թե հենց առաջին հարվածից հետո մեր բանակը ցրուցան կարվի, մեր երկիրը ծունկ կչոքեցվի: Իայց թշնամին սաստիկ սխալվեց:

Չնայած ժամանակավոր անհաջողություններին՝ մեր բանակը և մեր նավատորմը հերոսաբար հետ են մղում թշնամու գրոհները ամբողջ ֆրոնտի երկարությամբ՝ ծանր կորուստներ պատճառելով նրան, իսկ մեր երկիրը, — մեր ամբողջ երկիրը, — կազմակերպվել ու դարձել է մի միասնական մարտական լազեր, որպեսզի մեր բանակի և մեր նավատորմի հետ միասին կենսագործի գերմանական զավթիչների ջախջախումը:

Օրեր են եղել, երբ մեր երկիրն է՛լ ավելի ծանր դրության մեջ է գտնվել: Հիշեք 1918 թվականը, երբ մենք տոնում էինք Հոկտեմբերյան ռեյուցիայի առաջին տարեդարձը: Այն ժամանակ մեր երկրի երեք քառորդը գտնվում էր օտարերկրյա ինտերվենտների ձեռքին:

Ուկրաինան, Կովկասը, Միջին Ասիան, Ուրալը, Սիբիրը, Հեռավոր Արևելքը ժամանակավորապես կորցրել էինք մենք: Մենք չունեինք զաշնակիցներ, մենք չունեինք Կարմիր Բանակ, — մենք այն նոր էինք սկսել ըստեղծել, հաջը չէր հերիքում, չէր հերիքում զենքը, պակասում էր հանդերձանքը:

14 պետութայուններ այն ժամանակ վրա էին տալիս մեր երկրին: Բայց մենք չէինք վհատուում, հույսներս չէինք կորցնում: Պատերազմի կրակի մեջ այն ժամանակ մենք կազմակերպեցինք Կարմիր Բանակն ու մեր երկիրը ռազմական լազերի վերածեցինք: Մեծ Լենինի ոգին էր այն ժամանակ մեզ ոգևորում՝ պատերազմ մղելու ինտերվենտների դեմ, և ի՞նչ: Մենք ջախջախեցինք ինտերվենտներին, վերադարձրինք բոլոր կորցրած տերիտորիաները և հաղթութայուն ձեռք բերինք:

Այժմ մեր երկրի դրութայունն անհամեմատ ավելի լավ է, քան 23 տարի սրանից առաջ:

Այժմ մեր երկիրը բազմապատիկ ավելի հարուստ է թե՛ արդյունաբերությամբ, թե՛ պարենամթերքներով, թե՛ հումքով, քան 23 տարի առաջ: Մենք այժմ ունենք դաշնակիցներ, որոնք մեզ հետ միասին միասնական ֆրոնտ են բռնում ընդդեմ գերմանական զավթիչների: Այժմ մեր կողմն է հիտլերյան բռնակալության լծի տակ ընկած Եվրոպայի բոլոր ժողովուրդները համակրութայունն ու աջակցութայունը: Մենք այժմ երևելի բանակ և երևելի նավատորմ ունենք, որոնք իրենց կրճքով են պաշտպանում մեր հայրենիքի ազատութայունն ու անկախութայունը: Մենք չունենք լուրջ պակասութայուն ոչ պարենամթերքների, ոչ սպառազինութայուն և ոչ էլ հանդերձանքի: Մեր ամրոցը երկիրը, մեր երկրի բոլոր ժողովուրդները հենարան են հանդիսանում մեր բանակի, մեր նավատորմի համար, օգնելով նրանց ջախջախելու գերմանական ֆաշիստների զավթողական հորդանքներն: Մեր մարդկային ռեզերվներն անսպառ են: Մեծ Լենինի ոգին և նրա հաղթական դրոշմը այժմ մեզ ոգևորում են հայրենական պատերազմի ելնելու այնպես, ինչպես 23 տարի առաջ:

Միթե կարելի է կասկածել, որ մենք կարող ենք և պետք է հաղթենք գերմանական զավթիչներին:

Թշնամին այնքան էլ ուժեղ չէ, ինչպես նրան պատկերում են միջանի վախեցած ինտելիգենտիկներ: Սատանան այնքան սարսափելի չէ, որքան նրան պատկերում են: Ո՞վ կարող է ժխտել, որ մեր Կարմիր Բանակը մեկ տնդամ չէ, որ խուճապային փախուստի է մատնել գովաբանված գերմանական զորքերին: Եթե դատենք ոչ թե գերմանական պրոպագանդիստների պարծենկոտ հայտարարութայուններով, այլ Գերմանիայի իրական դրությամբ, ապա դժվար չի լինի հասկանալ, որ գերմանաֆաշիստական զավթիչները կատառտորֆայի առաջ են կանգնած:

Գերմանիայում այժմ տիրում է սոֆն ու աղքատութայունը. պատերազմի չորս ամսվա ընթացքում Գերմանիան կորցրել է չորսուկես միլիոն զինվոր. Գերմանիան արյունաքամ է լինում, նրա մարդկային ակզնրմներն սպառվում են, վրդովմունքի ուղին տիրում է ոչ միայն գերմանական զավթիչների լծի տակ ընկած՝ Եվրոպայի ժողովուրդներին, այլ նաև ըստ գերմանական ժողովրդին, որոնք պատերազմի վերջը չեն տեսնում: Գերմանական զավթիչները լարում են իրենց վերջին ուժերը: Դասկած չկա, որ Գերմանիան չի կարող երկար գերմանալ աղապիսի լարման: Էլի միջանի ամիս, էլի մի կես տարի, զուցե մի տարի, — և հիտլերյան Գերմանիան կոտլթի իւռճազործութայունների ծանրության տակ:

Ընկեր կարմիր-բանակայիններ և կարմիր-նավատորմայիններ, հրամանատարներ և քաղաշխատողներ, պարտիզաններ և պարսիզանուկներ:

Ձեզ է նայում ամբողջ աշխարհը, որպես այն ուժին, որն ընդունակ է
 ոչնչացնելու գերմանական զավթիչների թալանչիական հրոսակախմբերին։
 Եվ ընդդիմադրաբար ստրկացված ժողովուրդները, որոնք ընկել են գերմանական զավթիչների լճի տակ, ձեզ են նայում որպես ազատարարների։ Ձեզ մեծ
 ազատագրական միտիա է բաժին ընկել։ Ուրեմն, արժանի եղեք այդ միտիային։ Այն պատերազմը, որ դուք եք մղում, ազատագրական պատերազմ է, արդարացի պատերազմ է։ Թող ձեզ այդ պատերազմում ոգևորի մեր մեծ
 նախնիքները—Ալեքսանդր Նեվսկու, Դիմիտրի Դոնսկոյի, Կուզմա Մինինի, Դիմիտրի Պոժարսկու, Ալեքսանդր Սուվորովի, Միխայիլ Կուտուզովի—քաջության օրրազը։ Թող ձեզ հովանի լինի Մեծ Լենինի հաղթական դրոշմը։

Լիովին ջախջախենք գերմանական զավթիչներին։

Մահ գերմանական օկուպանտներին։

Կեցցե մեր փառապանծ հայրենիքը, նրա ազատությունը, նրա ապագան։

Լենինի դրոշի ներքո — առաջ գեպի հաղթության։

4482

Վ. Յակոբյան

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԲՈԼՇԵՎԻԿԸ

(Սուրեն Սպանդարյանի—Տիմոֆեյի մահվան 25-ամյակի առթիվ)

Ֆերմանական արյունաբերու ֆաշիզմի դեմ մղվող այս անդ զույր օրերին նորից վերականգնանում են մեր բոլշևիկյան պարտիայի պանծալի գեկավարների հերոսական կերպարները: Նրանք ամենուրեք մեզ հետ են, ոգևշնչում են մեզ, դատեպնդում, բազմապատկում մեր եռանդն ու կամքը՝ է՛լ ավելի ուժգին հարվածելու նենգ ու մարդակեր թշնամուն: Հերոս նախնիների արագիցիաներով դաստիարակված ու ոգեշնչված բոլշևիկյան մեր նոր սերունդն այսօր առասպելական սխրագործություններ է անում, պաշտպանելով սովետական սրբազան հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողը ֆաշիստական զաղաններից:

Սուրեն Սպանդարյանը—Տիմոֆեյը պատկանում է Լենինյան-Ստալինյան հին գվարդիայի փառավոր համաստեղություն շարքին:

Նա ծնվել է 1882 թվի գեկտեմբերի 15-ին, Թբիլիսիում, հայ հրապարակախոսի ընտանիքում:

Դեռևս պատանի հասակից, 1900-ական թվականների սկզբին, Թբիլիսիում ծանոթանալով Լենինի մեծագույն աշակերտի՝ ընկեր Ստալինի հետ, Ս. Սպանդարյանը մտավ բոլշևիկյան պարտիայի շարքերը և ռևոլուցիոն եռանդուն գործունեություն ծավալեց Կովկասի բազմազգ պրոլետարիատի միջավայրում:

1902—1906 թ. թ. Սպանդարյանը ուսանելով Մոսկվայի համալսարանում, ակտիվ մասնակցություն ուներ Մոսկվայի պրոլետարիատի և ռուսահոգության ռևոլուցիոն շարժումներին: Այդ տարիներին նա ձեռք բերեց նաև տեսական խոր պատրաստություն: 1905 թ. սկզբին մեկնելով Գերմանիա, Սուրենը, սակայն, այնտեղ երկար չապրեց: Ռուսաստանում ծավալվող 1905 թվի մեծագույն ռևոլուցիայի լուրն առնելով, նա իսկույն վերադարձավ Ռուսաստան, որպեսզի գեներ ձեռքին պայքարի իր հարազատ ժողովրդի ազատագրման մեծ գործի համար: Նա մասնակցեց գեկտեմբերյան հոյակապ ապստամբությանը Մոսկվայի բարրիկադների վրա, Պրեսնյայի բանվորական թաղամասում:

Սուրենը իր ընկերների հետ միասին ինն օր շարունակ, առանց հոսահատվելու, անձնվեր կռվում էր մի քանի անգամ գերազանցող, լավ ուղառազդնված ցարական ուժերի դեմ:

Այդտեղ, բարրիկադների վրա, թշնամու գնդակից հերոսական մահով ընկավ Սպանդարյանի մոտիկ ընկեր, բանվոր-բոլշևիկ Տիմոֆեյը: Բոցավառ Սուրենը սիրելի բնեկերը՝ դեակե առաջ երդվեց մինչև արյան վերջին կա-

Թիւր կռիւի և վրեժ լուծել անարդ թշնամուց: Այդ օրվանից Սուրին Սպանդարյանը իրեն կոչեց Տիմոֆեյ:

1906 թվի գարնանից վերադառնալով Կովկաս, այնուհետև նա ընկեր Ստալինի անմիջական ղեկավարութեամբ անդադրում աշխատեց Թբիլիսիում, Բազմում, Գանձակում և Անդրկովկասի այլ վայրերում, տանելով պարտիական անլեզալ պատասխանատու աշխատանքներ: Կոփվելով ռեպուցիտներների Ստալինյան դպրոցում, Տիմոֆեյը շուտով օչքի ընկավ ըուլէիկյան պարտիայի հմուտ կազմակերպչի, կրակոտ ագիտատորի, խորը տեսաբանի իր ընդունակութուններով և դարձավ ռուսաստանյան մասշտաբի դործիչ, պարտիայի և Անդրկովկասի պրոլետարիատի սիրելին: Սպանդարյանը ընկեր Ստալինի մերձավոր զինակիցներին էր, նրա հավատարիմ աշակերտը: Նրանց բարեկամութունը կոփվեց համատեղ աշխատանքում ու պայքարում: Ռուսական ռեպուցիայի բոլոր էտապներում Տիմոֆեյը անսասան կերպով պաշտպանում և կիրառում էր լենինյան-ստալինյան դիմը՝ Զախլախիչ հուրված տալով ռեպուցիայի բոլոր թշնամիներին:

Քաղաքական հակառակորդների նկատմամբ նա անողոր էր և խիստ, գաղափարակիցների նկատմամբ, ընդհակառակը, վերին աստիճանի հոգատար, նրբանկատ: Ընկերոջ համար, ինչպես ասում են, վերջին շապիկը կըտար: Գաղտնի պարտիական ժողովներում, կոնֆերենցիաներում, հրապարակային դիսկուսիաներում, ըուլէիկյան մամուլի էջերում նա անսպասելու հոգով, առանց վախենալու, իր կծու և համոզիչ լեզվով խարադանում և մերկացնում էր ըուլէիկյան պարտիայի բոլոր թշնամիներին, տատանվող երկչոտներին, հաշտվողականներին: «Վայ նրան, ով նրա լեզվի տակ կընկներ», — գրում է Տիմոֆեյի մասին հին ըուլէիկ, հանգուցյալ ընկեր Ստուբուան¹:

Մենշևիկները, դաշնակները, էսերները, հայ սպեցիֆիկները վախենում էին նրա հետ բացարձակ դիսկուսիայի դուրս գալ, որովհետև իր ըուլէիկյան ուղղամտութեամբ, սպանիչ սարկազմով Տիմոֆեյը կարողանում էր նրանց զինաթափ անել և ծիծաղելի դրութեան մեջ դնել:

Այդ պատճառով բանվոր դասակարգի թշնամիներն ասում էին նրան և անկարող լինելով խոսքով գիմագրելու նրա ճշմարտացի մերկացումներին, գիմում էին երբեմն անգամ ֆիզիկական կոպիտ ուժի օգնութեամբ:

Անսահմանորեն նվիրված լինելով ըուլէիկյան պարտիային, բանվոր դասակարգին, լենինին, Ստալինին, Տիմոֆեյը օրգանապես չէր տանում բոլոր նրանց, ովքեր թշնամի էին ըուլէիկյան սկզբունքներին կամ դավաճանում էին այդ սկզբունքներին:

«Ավելի քան միապետութեանը, ես ասում եմ մենշևիկներին» — ասել էր նա մի անգամ նրանց հասցեին:

«Կատաղի լենինյան» — բնութագրել էր նրան ցարական օխրանկան: Իսկ մենշևիկներն իրենց մոլուցքի մեջ հայտարարում էին՝ «եթե քրքրեա Տիմոֆեյի խելքը, ապա այնտեղ միայն լենին կգտնես», կարծելով թե դրանով վիրավորած կլինեն Սպանդարյանին: Այնինչ, այդ միայն պարծանքի զգացմունք էր հարուցում Սպանդարյանի մեջ: Մտածել իլլիչի նման, լինել իլլիչի գաղափարներին հավատարիմ, պայքարել այդ գաղափարների հաղ-

¹ „Заря Востока“ № 1286, 1926 г.

Թանակի համար—ահա Տիմոֆեյի դեիզը, ահա թե ինչի մեջ էր նա գըտնում իր գոյության իմաստը:

Մենշևիկների և տրոցկիզների մերկացման գործում խոշոր արժեք են ներկայացնում Սուրեն Սպանդարյանի հոդվածները, որոնք տպագրված են «Կայծ»-ում, «Նոր խոսք»-ում, «Бакинский пролетарий»-ում և բոլշևիկյան այլ թերթերում:

Ինչնով հայ ժողովրդի գավակ, Սպանդարյանը անգնահատելի դեր խաղաց իր ժողովրդի ազատագրման և վերածնման գործում: Սպանդարյանն առաջինն էր, որ Ս. Շահումյանի հետ միասին Հայաստանում ծավալեց Լենինի-Ստալինի գաղափարների լայն պրոպագանդան:

Մեծ Ստալինի անմիջական ղեկավարությամբ ու աջակցությամբ Ստեփան Շահումյանը և Սպանդարյանը հիմնադրեցին առաջին բոլշևիկյան հայկական մամուլը: Հայ ժողովրդի ազատագրման հարցը Սպանդարյանը մշտապես շարկապում էր ռուսական պրոլետարիատի ազատագրական պայքարի հետ: Այդ դիրքերից էլ ելնելով, նա անողոք պայքար կազմակերպեց բուրժուական նացիոնալիստների դեմ, որոնք անջատողական դիմ վարելով ռուսական մեծ դեմոկրատիայից, հայ ժողովրդին մղում էին դեպի կործանում: 1906 թվին, երբ դաշնակները հայ աշխատավորական մասսաներին ռուսաստանյան պանծալի ռեյուցիայից անջատելու և նրանց բուրժուազիայի ու հոգևորականության շահերին ծառայեցնելու նպատակով առաջ քաշեցին «ազգային սահմանադիր ժողով» հրավիրելու կոնտրռեյուցիոն իդեան, Սպանդարյանը վճռական պայքար տարավ դրա դեմ և մեկնացրեց դաշնակներին այդ պրովոկացիոն քայլի իմաստը:

«... Սահմանադիր ժողովի իսկական աստառը,—պարզաբանում էր Տիմոֆեյը,—բուրժուական-նացիոնալիստական ձգտումներն են: Հայկական սահմանադիր ժողովը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հ. Հ. դաշնակցության բուրժուական ձգտումների մարմնացումը: Առաջ է մղվում շատ նուրբ կերպով ազգային ավտոնոմիան, գուցե և ֆեդերացիան:

... Այդ «ազգային» սահմանադիր ժողովը ջլատում է հեղափոխական ուժերը, բաժան-բաժան անում նրանց, դառնալով գործիք ռեակցիայի ձեռքին»¹:

Սպանդարյանը կոչ էր անում հայ աշխատավորությանը չմասնակցելու «ազգային ժողովի» ընտրություններին, այդ գավառական, «զուտ հայկական ռեյուցիային», այլ «... միացյալ ուժերով Ռուսաստանի պրոլետարիատի հետ՝ անողոք կռիվ մղելու բռնակալության դեմ»²:

Մի այլ հոդվածում մերկացնելով դաշնակցության «Ալիք» թերթուկի դեմագոգիական զրպարտիչ ելույթը ՌՍԴԲՊ-ի դեմ, Տիմոֆեյը կրկին անգամ գրում էր.

«Մենք, կռվելով այդ «ազգային», զուտ հայկական հեղափոխության» դեմ, կռվելով էջմիածնում հավաքվելիք կենտրոնական ժողովի դեմ—միշտ շեշտել ենք այդ բոլորի հակահեղափոխական աստառը, ռեակցիոն բնույթը, երբ ենք արել հայ բանվոր դասակարգին, հայ գյուղացիության՝ չզբաղվել ներկա մեծ և պատմական մոմենտում զուտ տնային գործերով, չբաժանվել

¹ «Կայծ» № 41, 1906 թ.:

² Նույն տեղը, № 36.

ամբողջ Ռուսաստանի կռվող հեղափոխական ժողովուրդը մենք ասել ենք, որ այդ ազգային ժողովը նպատակ ունի բթացնել հայ բանվորի դատակարարային գիտակցությունը, ավելի ևս նողմացնել նրան մյուս ազգերի պրոլետարիատից¹:

Լինելով խորապես ինտերնացիոնալիստ, Տիմոֆեյը անհաշտ պայքար տարավ բուրժուական նացիոնալիզմի դեմ, որը Կովկասի պրոլետարիատի վտանգավոր թշնամին էր: Հատկապես խոշոր է Սպանդարյանի դերը հայ ժողովրդի ամենաոթնութ թշնամիների՝ դաշնակների դեմ մղած պայքարում:

Դաշնակներին Սպանդարյանը անվանում էր «հայ կյանքի ցեցեր», «հայ բանվոր դասակարգի գիտակցությունը բթացնողներ», «հայ պրոլետարիատը ամենաանամոթ կերպով հարստահարողներ և կեղեքողներ»: Անմոռաց են այն սպանիչ բուրժուազրույթյունները, որ տվել է Սպանդարյանը դաշնակցական մի շարք լիզերների, որոնք իրենց պոռնկային բնավորություն համաձայն՝ մի արևոջ գրկից մյուսի գիրկն էին նետվում: Պատահական չի, որ պատմության ազդանոցում ընկած այդ սրիկաներին այսօր իր բանգիտական նպատակների համար նորից լույս տալիս են է հանել աքյուսարբու Հիտլերը:

1907 թվից փոխադրվելով Բագու՝ պարտիական աշխատանքի, Տիմոֆեյը հանդիսացավ ընկեր Ստալինի լավագույն օգնականներից մեկը Բագվի պրոլետարիատի դասակարգային անախընթաց մարտերի կազմակերպման գործում: Բագուց դարձավ անդրկովկասյան բալչևիկյան կազմակերպությունների հեծարանը, լենինյան պարտիայի անխորտակելի ամբոցը (Լ. Պ. Բերիա):

Ստալինյան ուսակցիայի հարձակման ամենածանր պայմաններում Տիմոֆեյը, ձեռները քշտած, առանց գաղարի, բոլշևիկյան անվեհերությունով կատարում էր Լենինի և Ստալինի հրահանգները անլեզալ պարտիական կազմակերպություններն ամբապնդելու, լեզալ հնարավորություններն օգտագործելու, մասսաներին ուղղուցիտն նոր վերելքին նախապատրաստելու մասին: Նրա խոսքի և գործի մեջ տիրում էր կատարյալ ներդաշնակություն, որ հատուկ է բոլշևիկյան պարտիայի բոլոր ակաճավոր ղեկավարներին: Ամեն բան ենթարկել պրոլետարիատի ազատագրման գերագույն շահին, ժողովրդի, հայրենիքի շահին: Բագվիցս նա մահացու վտանգի ենթարկելով իր սեփական անձը, օգնել է իր գաղափարակիցներին ազատվելու ցարական դաժան բանտերից, փրկել է կազմակերպությունը վերահաս վտանգից, միջոցներ է հայթայթել կազմակերպություն համար, գաղանի տալարաններ հիմնել, պրոկլամացիաներ հրատարակել և տարածել:

Նա խիզախ էր ու հնարագետ: «Կազմակերպության համար ամենածանր մոմենտներին ընկ. Տիմոֆեյը միշտ կարողանում էր ելք գտնել» — գրում է Վ. Ստուբոլան: Նրան չէր սարսափեցնում ոչ ցարական բանտը, ոչ աքսորը, ոչ կախաղանը: «Անվեհեր Սուրեն», «ուղղուցիայի հերոս» — այսպես էին անվանում նրան իր պարտիական ընկերները: Բագվում աշխատած հին բոլշևիկներից մեկը պատմում է, թե ինչպես մեկ անգամ Բայիլովի ժողովրդագրական ծան սենյակներից մեկում, երբ տեղի ունեցավ Բագվի պարտիական կազմակերպության կոնֆերենցիան, հանկարծ շենքը շրջապատվում է ոստիկանու-

¹ «Կայծ» № 43, 1906 թ.:

թյամբ: Կոնֆերենցիայի մասնակիցներին ձերբակալությունից փրկելու համար Տիմոֆեյը դիմում է անձնազոհության. նա և բոլշևիկ Մամեդ Յարովը իսկույն դուրս են գալիս նիստի սենյակից և հանձնվում ոստիկանության ձեռքը: Այդ միջոցին Կոնֆերենցիայի ղեկավարները հնարավորություն են ստանում ներսի դռնից դուրս գալ ներկայացման հանդիսատեսը և, այդպիսով, ազատվել ձերբակալությունից¹:

1912 թվի հունվարին Սպանդարյանը մասնակցեց պարտիայի 6-րդ (Պրապաշի) կոնֆերենցիային, որի նախապատրաստման համար նա ընկ. ընկ. Յապլինի և Օրջոնիկիձեի հետ միասին խոշոր աշխատանք տարավ: Կոնֆերենցիայի ղեկավար նա ընտրվել էր Բագվի կազմակերպության կողմից: Պրապաշյում առաջին անգամ Տիմոֆեյը հանդիպեց Վ. Ի. Լենինին և այնուհետև նրանց միջև հաստատվեց սերտ բարեկամություն: Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում Սպանդարյանի նվիրվածությունը բոլշևիզմին, նրա սկզբունքայնությունը, հաստատակամությունը և անհաշտելիությունը բանվոր դասակարգի թշնամիների նկատմամբ: Կոնֆերենցիայում Տիմոֆեյն ընտրվեց բոլշևիկյան պարտիայի Լենինյան Կենտկոմի անգամ և մտավ Կենտկոմի Ռուսական Բյուրոյի կազմի մեջ, որին գլխավորում էր ընկեր Ստալինը:

Իր ռեզոլուցիոն գործունեության ընթացքում Սպանդարյանը մշտապես հալածվել է ցարիզմի կողմից և բազմիցս ենթարկվել բանտարկության: Ներսիս Բայց ամեն անգամ նա կարողանում էր հնարագիտությամբ դուրս պրծնել ցարիզմի ճիրաններից: Վերջին անգամ, ստոր պրովոկատորի մատնության հետևանքով, Տիմոֆեյը ձերբակալվեց 1912 թվին և 1 տարի 4 ամիս Մետեխի բանտում նստելուց հետո դատապարտվեց ցմահ աքսորի՝ Սիբիրում:

Չնայած դատավճռի դաժանությանը, երբ նա առհավետ զրկվելու էր իր գաղափարների համար ազատ պայքարելու հնարավորությունից, զրկվում էր ընտանիքից, սիրասուն զավակներից, երբ նրա առաջ գծադրվում էր աքսորականի մի տանջալից կյանք, այնուամենայնիվ բոլշևիկին հառաչել սառնասրտությամբ նա դիմավորեց դատավճիռը և կտրականապես հրաժարվեց ցարական «արդարադատությանը» վճռարեկ զանգատ տալուց, համարելով այդ փոքրոգություն, ռեզոլուցիոնների համար անպատվաբեր քայլ:

Մոտ երկու ամիս 25 օր շղթայակապ ձեռքերով, քրեական աքսորականներով լեփ-լեցուն կեղտոտ վազոններում փակված՝ ճանապարհ դնաց Սպանդարյանը մինչև հասներ իր աքսորավայրը: Նրա առողջությունն առանց այն էլ քայքայվել էր բանտում, իսկ այս տաժանակիր ճանապարհորդությունը բոլորովին ուժասպառ արեց նրան: Վազոնում նա չափազանց վատ էր զգում իրեն, կոկորդի կատարի պատճառով ստիպված էր ծխելը թողնել: Ճանապարհներին, երբ էտապը հաճախակի կանգ էր առնում, հարկ էր լինում շաքաթներով մնալ փոխադրական ցուրտ ու խոնավ բանտերում, իսկ Սպանդարյանը տաք հագուստ ու ոտնաման չուներ: Բայց նա երբեք չէր տրտնջում իր ծանր վիճակից, ընդհակառակը, աշխատում էր իրեն պահել միշտ զվարթ, կառավարում էր աքսորականների հետ, կազմակերպում նրանց մեջ հետաքրքիր զրույցներ, բարձրացնում նրանց տրամադրությունը: Աքսորականներն էլ իրենց հերթին սիրում ու հարգում էին Սուրենին:

¹ Ընկ. Գ. Վերմիշյանի հիշգրտությունները. ՀԿ(Բ)Պ Կենտկոմի պարտաբեկում:

Կրտսնայարսկի փոխադրական բանտից 1913 թվի նոյեմբերի 11-ին նա գրում էր իր կնոջը՝ Օլգա Վյաչեսլավովնային.

«Հիմա այստեղ սարսափելի ցուրտ է: Երկյուղով մտածում եմ ապագայի մասին,—չունենալով տաք հագուստ, ոտնաման և այլն: Հոգ տար փողի մասին և ուղարկիր ինձ: Ես վաղուց է, որ փող չունեմ: Ճանապարհին շատ ծախս եղավ: Այստեղ ամեն տեսակ միջատներն ու անիծներն անպատիժ ուտում են ինձ. ամբողջ մարմինն չանցողոված է և արյունվիկ: Տրամադրությոնս կայառ է, ուրախ և լավ: Կեցցե կյանքը: Մենք դեռ ոտքի կենանք—կարիք չկա հուսահատվելու»¹:

Սկզբում Սպանդարյանը բնակեցվեց Ենիսեյսկի նահանգի Պերովսկ գավառի Իսոկենտեսկայա գյուղում: Իայց այստեղ նա երկար չմնաց: Ծարավան կառավարությունն իմանալով աքսորում նրա ծավալած ռեպրեսիոն աշխատանքի, ինչպես նաև նախապատրաստվող փախուստի մասին, Ենիսեյսկի նահանգից աքսորեց էլ ավելի հեռու—Տուրուխանյան երկրամասի Մոնաստիրսկոյե գյուղը:

Տուրուխանյան երկիրը ցարիզմի ժամանակ Սիրիերի ամենախուլ, ամենավայրի և կլիմայական ու կյանքի պայմանների տեսակետից ամենադժնդակ շրջանն էր: Այստեղ էին աքսորվում ցարական կառավարության համար ամենավտանգավոր ռեպրեսիոնները: Այստեղ էին աքսորված նաև ընկերներ Ստալինը և Սվերդլովը:

Տիմոֆեյին տեղավորեցին երկաթուղագծից մեկ և կես հազար կիլոմետր հեռու, Ենիսեյ գետի ափին, աշխարհից կտրված, դադանաբնակ անաշուրածիր տալգաներով շրջապատված Մոնաստիրսկոյե գյուղում:

Սակայն միշտ աշխույժ, աշխատասեր և հաստատակամ Սպանդարյանը հուսահատվեց աքսորի դաժան պայմաններում: Հասնելով Մոնաստիրսկոյե, նա իսկույն մտածեց այստեղ ևս ռեպրեսիոն աշխատանքները շարունակելու մասին: Նա առաջին հերթին տեղեկացավ ընկեր Ստալինի մասին և սերտ կապ հաստատեց բոլշևիկ աքսորականների հետ:

Ստալինն այդ ժամանակ իր 6-րդ աքսորն էր կրում Սպանդարյանի բնակավայրից 175 վերստ հյուսիս գտնվող Կուրեյկա կայանում:

Այդ՝ առաջին իմպերիալիստական պատերազմի թևժ տարիներն էին: Փերմանական իմպերիալիզմը, մեր օրերի արյունոտուշտ պազան, մարդակեղ չիտլերի նախնին՝ Վիլհելմ Վ-ը կազմակերպելով համաշխարհային սպանոցը, ձգտում էր հաղուդ տալ իր աշխարհակալական խելագար իդձերին:

Անծալրածիք ուղղամահատներում արյունաքամ էին լինում միլիոնանոց բանակները, պատերազմի Մոլոթին կուլ էին զնում տասնյակ հազարավոր քաղաքներ ու շեն գյուղեր. միլիոնավոր մայրեր զրկվում էին իրենց զավակներից, կանայք՝ ամուսիններից, զավակները՝ հայրերից ու եղբայրներից: Որդեգուրկ մայրերի անեծքն էր մոլեգնում իմպերիալիստ բռնակալների գլխին, որոնք սկսել էին այդ անարդարացի ու ավերիչ պատերազմը:

Միակ պարտիան, որ անդուլ կերպով ու հերոսաբար պայքարում էր իմպերիալիստական պատերազմի դեմ և ցույց տալիս ամբողջ մարդկությանը պատերազմից դուրս գալու ռեպրեսիոն ճշմարիտ ուղին—դա Ռուսաստանի

¹ Ս. Սպանդարյան—«Հոգվածներ, նամակներ և փաստաթղթեր», էջ 331:

սոցիալ-դեմոկրատական-բոլշևիկների պարտիան էր, Լենինի-Ստալինի պարտիան:

Աքսորում ընկեր Ստալինը, Սվերդլովը և Սպանդարյանը հաղթահարելով բոլոր փեսակի արգելքները, հաճախ հանդիպում էին իրար և քննարկում պատերազմի ու բոլշևիկյան պարտիայի տակտիկայի վերաբերյալ հարցերը, կապ էին պահում Լենինի հետ, գաղտնի ճանապարհներով դիրեկտիվներ ուղարկում լայնածավալ Ռուսաստանի պարտիական կազմակերպություններին, դիրքերում գտնվող բոլշևիկներին, նախապատրաստելով իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական կռիվի վերածելու պատմական օրը:

Սպանդարյանին, որպես ձշմարիտ հայրենասերի, խորապես հուզում էր իր հայրենիքի, իր ժողովրդի բախտը, և նա չէր խնայում իր կյանքը ի սպաս դնելու Ռուսաստանի աշխատավոր ժողովուրդների սոցիալիստական լավագույն ապագայի, նրանց ազատություն գործին:

Աքսորում ևս Տիմոֆեյը մնաց նույն խիղախ, անընկճելի, անհաշտ ունությունները: Նրա համար հաշվառող չափով ատելի էրն ցարական կարգերը, բուրժուական նացիոնալիստները, սոցիալ-դավաճանները, օպորտունիստները:

1914 թվի վերջերին տեղեկանալով, որ իր նախկին ընկերներից մեկը արտասահմանում լիկվիդատորական հոգվածներ է գրում պարտիայի դեմ, Սուբինը խիստ վրդովվեց և կոշից պահանջեց նրա հասցեն՝ իր հարաբե- ջությունները խզելու մասին նրան հայտնելու համար: «Ես նրան նամակ կղրեմ,—գրում էր Սպանդարյանը Օլգա Վյաչեսլավովնային,—որով կխզեմ նրանից իմ հարաբերությունները՝ լիկվիդատորական թերթում նրա վրդովեցուցիչ ելույթից հետո»:

1915 թվի մարտին Սպանդարյանը Թրիխսի իր նախկին ծանոթներից մի նամակ ստացավ: Նամակի հեղինակը, որ մի անգիտակից գրաշար էր, իր մեղչանական դատողություններով պախարակում էր Սպանդարյանին, որ նա «մուժիկ» է դառել, այնինչ իր խելքով ու կրթությամբ կարող էր իր համար շքեղ կյանք ստեղծել, հրաժարվելով ունությունն աշխատանքից: Այդ նամակը շատ ծանր տպավորություն գործեց Սպանդարյանի վրա: Նա պայրացած էր հատկապես այն բանի համար, որ այդպես գրողը գրաշար բանվոր էր: Մի քանի օր հետո Տիմոֆեյը Թրիխսի իր բարեկամներից մեկի միջոցով այդ գրաշարին հետևյալը հաղորդեց.

«...Ես «մուժիկ» չեմ դարձել, երկրորդ՝ ես լավ գիտակցում եմ՝ ինչու համար եմ այս դրություն մեջ, երրորդ՝ բանվորը այս պայմաններում ինձ պես մարդուն այդպես բաներ չպետք է գրի... Միանգամայն թքում եմ «լավ և շքեղ կյանքի վրա»:

